



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ԷՆՍԻՆՈՅԻ
Ս. ՆԱՅԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 3 Յոկտեմբերին, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY
MARTYRS CHURCH**

On Sunday, October 3rd, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino. He will also deliver the sermon.

Ս. ԹԱՐԳՍԱՆՉԱՑ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱԽԱՏՕՆԱԿ

Դպրեվանքի 80-ամեակին եւ Սրբոց Թարգմանչաց տօնին առիթով, Ուրբաթ, 8 Յոկտեմբերին, երեկոյեան ժամը 7-ին, Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենան երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասուն:

Պիտի երգուին Թարգմանչաց տօնին լուիրուած շարականներ:

EVENING SERVICES ON FEAST OF THE HOLY TRANSLATORS

On Friday, October 8th, 2010, the 80th anniversary of the Antelias Seminary and the Feast of the Holy Translators will be observed with evening services at Holy Martyrs Church in Encino.

The service is taking place by the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and will be conducted by Prelacy clergy members.

The service begins at 7:00 p.m.

ՅԱՐՈՒԹ ՊԱՐՍԱՄԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Արեւմտեան Թեմի բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ու Ազգային Վարչութիւնը այսու կը յայտարարեն, թէ ուսումնական յառաջիկայ տարեշրջանին համար, դիմումնագիրներ կ'ընդունին «Յարութ Պարսամեան Յայ Ուսանողներու Կրթաթոշակ»ին համար:

Հիմնադրամը հաստատուած է Փրոֆ. Յարութ Պարսամեանի կողմէ, աջակցելու համար հայ ուսանողներու, որոնք կը փափաքին բարձրագոյն ուսման տիրանալ Միացեալ Նահանգներու որեւէ վարկաւորուած համալսարանի կամ քոլէճի մէջ:

Նշենք, որ բարերարին փափաքին համաձայն, այս կրթաթոշակը այսուհետեւ բաց է ոչ միայն հաշմանդամ, այլ բոլոր հայ ուսանողներուն համար:

Դիմումնագիրին պէտք է կցել.-

- Ուսանողին ամփոփ կենսագրականը
- Վկայագիր մը՝ ամերիկեան որեւէ օրինաւոր համալսարան կամ քոլէճ ընդունուած ըլլալու մասին:

Կը խնդրուի դիմումնագիրները Ազգ. Առաջնորդարան յղել հետեւեալ հասցեով.-

Harut Barsamian Armenian Students Scholarship Fund
C/O Western Prelacy
6252 Honolulu Ave., La Crescenta, CA 91214

APPLICATIONS NOW BEING ACCEPTED FOR THE “HARUT BARSAMIAN ARMENIAN STUDENTS SCHOLARSHIP FUND”

His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council of the Western Prelacy of the Armenian Apostolic Church of America hereby announce that they will accept applications for the “Harut

Barsamian Armenian Students Scholarship Fund” for the forthcoming academic year.

The Fund has been established by Prof. Harut Barsamian to assist students of Armenian decent in obtaining higher education at any accredited college or university in the United States.

Per the request of Prof. Barsamian, scholarships are now available not only to handicapped but to all Armenian students.

The application for the scholarship should include:

- A short biography of the applicant
- A certificate from the college or university about the status of the applicant as a student.

Applications must be submitted to the following address:

Harut Barsamian Armenian Students Scholarship Fund
C/O Western Prelacy
6252 Honolulu Ave., La Crescenta, CA 91214

ՀԱՅ ԿՆՈՋ ՏԱՐՈՒԱՆ ՆՈՒԻՐՈՒԹ՝ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ Տ. Օ. ՄԱՐՄԻՆԻ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ



Հայ Կնոջ Տարուան Նուիրուած ձեռնարկներուն ծիրին մէջ, Հինգշաբթի, 30 Սեպտեմբերին, կ.ա. ժամը 11:30-ին, Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Յանձնախումբը ճաշկերոյթ դասախօսութիւն մը կազմակերպած էր Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը եւ

ներկայութիւնը:

Բարի գալուստի խօսք արտասանեց Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամներէն Տիկին Սալբի Սրուբեան, որ նաեւ աւելի ուշ ներկայացուց օրուան դասախօսը:

Առաջնորդ Սրբազան Հայրը կատարեց սեղաններու օրհնութիւնը եւ փոխանցեց իր ողջոյնի խօսքը:

Չեկուցաբերն էր Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամի Վարչութեան անդամներէն՝ Տոքթ. Վերժին Մատելեան, որ ներկայացուց «Ոսկրածուծի փոխ-պատուաստում» նիւթը:

Աւարտին, Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց կազմակերպիչ մարմինն ու դրուատիքով արտայայտուեցաւ յարգելի դասախօսին մասին:

"YEAR OF THE ARMENIAN WOMAN" THIRD LITERARY-LUNCHEON HELD AT THE PRELACY

In response to the declaration of 2010 as the "Year of the Armenian



Woman" by H.H. Catholicos Aram I, a number of events have already taken place throughout our Prelacy to honor and celebrate the role and contributions of Armenian women.

In this regards, the Prelacy Ladies Auxiliary has organized a series of literary luncheons, the third of which took place under the auspices of the Prelate on Thursday, September 30th,

2010, at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

The official program began after the luncheon, with welcoming remarks by Ladies Auxiliary member Mrs. Salpi Srourian.

The keynote speaker was Dr. Vergine Madenlian, who spoke of the work carried out by the Armenian Bone Marrow Donor Registry, as well as the benefits of bone marrow and stem cell transplantations in rare cases.

In conclusion, the Prelate commended the organizers and the day's speaker and conveyed his blessings to them and to the attendees.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ «ԱՍՊԱՐԷԶ»-«ՀՈՐԻԶՈՆ»Ի ՏԱՐԵԿԱՆ ԶԵՌՆԱՐԿԻՆ

Կիրակի, 3 Հոկտեմբերին, երեկոյեան ժամը 6-ին, «Ասպարէզ»-«Հորիզոն»ի տարեկան ձեռնարկը տեղի պիտի ունենայ Մոնթեպելլոյի «Բաղրամեան» սրահին մէջ:

Ծանօթ է, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը 2010 տարին հռչակած է «Հայ Կնոջ Տարի»: «Ասպարէզ»-«Հորիզոն»ի տնօրէնութիւնը, ընդառաջելով Վեհափառ Հայրապետի կոչին, ձեռնարկին ընթացքին պիտի

գնահատե՛լ նուիրեալ հայուհիներ, որոնք են՝ Տիկին Անահիտ Մայմարեան, Դոկտ. Ռիթա Որբերեան, Տիկին Հայկուշ Գոհլըր, Տիկին Զնար Մանճիկեան եւ Դոկտ. Յասմիկ Թաշճեան, վերջինը յետ մահու:

Յատուկ գնահատանքի ու յարգանքի պիտի արժանանան նաեւ անձնակազմի ու աշխատակազմի այժմու եւ անցեալի այն անդամները, որոնք այս հաստատութեան ծառայած են երկարատեւ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւններն ու գնահատանքը:

Ձեռնարկին ներկայ պիտի ըլլան Ազգային Վարչութեան անդամներ:

PRELATE TO ATTEND ASBAREZ/HORIZON ANNUAL BANQUET

On Sunday, October 3rd, 2010, the annual banquet of Asbarez/Horizon will be held at Bagramian Hall in Montebello.

In observance of the "Year of the Armenian Woman" as proclaimed by H.H. Catholicos Aram I, a special presentation will take place during the banquet honoring Ms. Haigoush Keghinian-Kohler, Ms. Knar Manjikian, Ms. Anahid Meymarian, Dr. Hasmig Tashjian (Posthumously), and Dr. Rita Vorperian.

Past and present staff members will also be honored.

The Prelate will attend and convey his blessings and message. Executive Council members will also be in attendance.

ՍԵՆՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԻ 90ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒՄԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Շաբաթ, 2 Հոկտեմբերի յետմիջօրէին, Կլենտէյլի հանրային գրադարանին մէջ, տեղի պիտի ունենայ գիտաժողով մը, որ կազմակերպուած է Հայկական Յեղասպանութեան Ոգեկոչման Միացեալ Յանձնախումբին կողմէ:

Սեմինար-հանդիսութիւնը նուիրուած է Սենրի Դաշնագրի 90-ամեակին, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն՝ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան, Տոքթ. Արա Պապեան, Տիար Յարութ Սասունեան, նախագահ Վուրո Ուիլսընի շառաւիղներէն Տանըլտ Ուիլսըն Պուշ եւ այլ մտաւորականներ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Գերպ. Տ. Միւռն Շ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութիւնները:

90TH ANNIVERSARY OF THE TREATY OF SEVRES

On Saturday, October 2nd, 2010, the 90th anniversary of the Sevres Treaty will be observed with a seminar organized by the Armenian Genocide United Commemoration Committee at Glendale Public Library from 2:30-5:30 p.m.

Panelists include Prof. Richard Hovannisian, Mr. Harut Sassounian, and Mr. Ara Babian. Mr. Donald Wilson-Bush, a descendent of President Woodrow Wilson, will also appear at the event.

Very Rev. Fr. Muron Aznikian will attend and convey the Prelate's message.

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Միացեալ Նահանգներու մեր Թեմի գեղեցիկ աւանդութիւններէն Է,



միջ-եկեղեցական
յարաբերութեանց ծիրէն
ներս, գործակցական սիրոյ
այն մթնոլորտը, որ
տարիներէ ի վեր կը տիրէ
Արեւելեան Ուղղափառ Հայ,
Ղրպտի եւ Ասորի քոյր
եկեղեցիներու եւ անոնց
բարեջան Առաջնորդներուն
միջեւ:

Անոնք
քրիստոնեական
փոխադարձ սիրոյ եւ
յարգանքի մթնոլորտի մէջ

սերտօրէն կը գործակցին եւ միատեղ՝ ժամերգութիւն, աղօթք, սուրբ
պատարագ թէ կրօնական, դաստիարակչական, պատանեկան ու
երիտասարդական մակարդակներու վրայ օգտաշատ ծրագիրներ կը
մշակեն եւ հաւաքներ կը կազմակերպեն, նպատակ ունենալով
քրիստոնեական ուղղափառ դաւանութիւնը, եկեղեցական հարուստ
անցեալն ու ժառանգութիւնը փոխանցել նոր սերունդներուն եւ ամրապնդել
Առաքելական հաւատքը:

Այս ծիրին մէջ, Երեքշաբթի, 28 Սեպտեմբերի առաւօտեան ժամը
10:00ին, Ասորիներու Ս. Եփրեմ Մայր Տաճարին մէջ, Պըրպէնք, տեղի
ունեցաւ համատեղ Ս. Պատարագ, նախագահութեամբ եւ
մասնակցութեամբ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներուն,
յանձինս հիւրընկալ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Արեւմտեան
Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Եւոճին Քափլան Արքեպիսկոպոսի, Թեմիս
բարեջան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, եւ Ղրպտի
Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ.

Սերաբիոն Եպիսկոպոսի:

Ս. Պատարագին ներկայ էին յիշեալ առաջնորդութիւններու սահմաններուն մէջ ծառայող բոլոր եկեղեցական հայրերը:

Հոգեւոր Առաջնորդները զգեստաւորուած, հոգեւորականներու թափօրով առաջնորդուեցան Ս. Եկեղեցի, ուր համատեղ կատարեցին Ս. Եւ անմահ Պատարագը: Ս. Պատարագի ընթացքին, յիշուեցան նաեւ չորս հոգեւոր պետերը՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետը, Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը, Ընուտա Գ. Պապը, Եւ Չաքքա Պատրիարքը:

Յուզիչ Եւ տպաւորիչ էր պատկերը, երբ »Ողջոյն«ի ժամանակ բոլոր հոգեւոր հայրերը Քրիստոսի ողջոյնը Եւ սուրբ համբոյրը փոխանակեցին իրարու հետ:

Ս. Հաղորդութեան ժամանակ, ներկայ բոլոր եկեղեցականները, երեք շաբթ կազմած, երկիւղի Եւ հաւատով մօտեցան Եւ հոգեւոր Առաջնորդներուն ձեռամբ հաղորդուեցան Քրիստոսի Սուրբ մարմինով Եւ արինով:

Ս. Պատարագի աւարտին Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ եկեղեցականներէն՝ Տ. Ճորճ Թումա, տուաւ օրուան պատգամը, նիւթ ունենալով Արեւելեան Ուղղափառ Հայրերու ուսուցմունքը հոգեւոր մկրտութեան մասին: Ան Առաքելական դարաշրջանէն փոխանցուած վաւերագրերու Եւ եկեղեցական հայրերու վկայութիւնները վկայակոչելով, ամփոփ գիծերու մէջ վեր առաւ տուեալ թեման:

Արարողութեան աւարտին, հաւաքական խմբակար առնուեցաւ, որմէ ետք տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Տարբեր եկեղեցիներու հոգեւոր հայրեր սեղանակից եղան իրարու: Ճաշկերոյթի ընթացքին Թեմիս Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ հոգեւորականներուն խօսեցաւ ընդհանրապէս Հայ Եկեղեցւոյ տօնացոյցէն ներս Ս. Խաչի տօնին Եւ անոր կապուած աւանդութեանց, ինչպէս նաեւ մասնաւորաբար Վարագայ Ս. Խաչի հայկական տօն մը ըլլալու հանգամանքին մասին: Նաեւ միւս առաջնորդները խօսք առնելով իւրաքանչիւրը ներկայացուց իր եկեղեցւոյ կեանքէն ու աւանդութենէն ներս գոյութիւն ունեցող Ս. Խաչի տօնակատարութեանց մասին:

Սիրալիր մթնոլորտի մէջ սկսուած հոգեպարար օրը իր աւարտին հասաւ աղօթքով Եւ բարեմաղութամբ:

ORIENTAL ORTHODOX CHURCHES ANNUAL JOINT DIVINE LITURGY AND CLERGY CONFERENCE

On Tuesday, September 28th, 2010, the Prelates and clergy of the Armenian, Coptic, and Syriac Churches gathered at St. Ephraim Syriac Orthodox Cathedral for the Oriental Orthodox Churches annual joint Divine Liturgy and clergy conference.

The Divine Liturgy was celebrated jointly by H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, Prelate of the Syriac Orthodox Church, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and H.G. Bishop Serapion, Prelate of the Coptic Orthodox Church. Clergy from the three churches participated in the

service, during which prayers were offered for the four spiritual leaders of the Churches, H.H. Catholicos Karekin II, H.H. Catholicos Aram I, H.H. Pope Shenouda III, and H.H. Patriarch Zakka I. Holy Communion was also offered to all participating clergy.



Following the service, Rev. Fr. George Touma of the Syriac Orthodox Church delivered the day's message on the Oriental Orthodox teachings on spiritual baptism.

A luncheon followed, during which Archbishop Mardirossian spoke of feasts dedicated to the Holy Cross within the Armenian Church, specifically the Feast of the Holy Cross of the Varak which is unique to the Armenian Church.

Archbishop Kaplan and Bishop Serapion also spoke of traditions in their respective Churches with regards to the Holy Cross.

The day concluded with blessings and exchanges of well wishes.
